



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» դեկտեմբեր 2017 թ. № 234 - Ա/1  
ք. Երևան

ԱՐՍԵՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ  
«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ»  
ԿՈԶՄԱՆՆ ԱՐԺԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ժ. 5» կետի՝ հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում մեծ ներդրում ունենալու և ծննդյան 90-ամյակի կապակցությամբ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչմանն արժանացնել և համանուն կրծքանշանով պարգևատրել Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչ Արսեն Անուշավանի Գալոյանին:

2. Հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Աննա Մխիթարյանին՝ հատկացնել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչման 1 (մեկ) կրծքանշան, 1 (մեկ) վկայական, 1 (մեկ) շնորհագիր:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ